ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆ
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն,
երաժշտության բաժնի վարիչ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4
Էլ. հասցե՝ annaasatryan2013@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՇՈՒՇԻՈՒՄ

«1920 թվականի նախօրյակին Շուշին եղել է մի ծաղկող երաժշտական օազիս: Այստեղ, որպես սոխակների ծառուղուց, հնչել է «համաարևելյան» համբավ ձեռք բերած երաժշտությունը»:
Մարիետա ՇԱՀԻՆՅԱՆ[1]

Ներածություն

Ծանրակշիռ են Շուշիի դերն ու նշանակությունը Անդրկովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի, ինչպես նաև սփյուռքահայ երաժշտական արվեստի՝ կոմպոզիտորական և կատարողական արվեստի զարգացման գործում: Պատահական չէ, որ քաղաքը կոչվել է «Անդրկովկասի կոնսերվատորիա»: Այստեղ ակտիվ է եղել երաժշտական կյանքը, ինչն էլ իր հերթին նպաստել է շուշեցիների երաժշտական մակարդակի բարձրացմանը: Այստեղ են ծնունդ առել և ձևավորվել երաժշտարվեստի հետագայում անվանի գործիչներ:

Շուշիում են ծնվել և նրա երաժշտական մթնոլորտում որպես երաժիշտներ ձևավորվել հայ կոմպոզիտորներ և երաժիշտ-կատարողներ Գրիգոր Սյունին, Եղիշե Բաղդասարյանը, Դանիել Ղազարյանը, Արշակ Կոստանյանը, Բոգդան Թումանյանը, Հովհաննես Իոանիսյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Գրիգոր Մելիքյանը, Բալա Մելիքյանը և ուրիշներ:

Ծանրակշիռ է Շուշիի դերը ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման գործում: Անդրկովկասում լայն ճանաչում գտած շուշեցի երաժիշտները նոր աստիճանի են բարձրացրել ժողովրդական երաժշտական գործիքներով (թառ,

[1] Բրուտյան Ց. 2000, 34:

քամանչա, զուռնա և այլն) կատարողական արվեստը, մշակել-կատարելագործել են արևելյան երաժշտության զանազան ժանրեր:

Շուշեցի երաժիշտներից շատերն իրենց բազմարդյուն գործունեությունը նվիրաբերեցին ոչ միայն հարազատ, այլև տարբեր ժողովուրդների ազգային երաժշտության զարգացման գործին:

Շուշեցի երաժիշտների ներդրումը հայ պրոֆեսիոնալ երաժշտության առաջընթացի գործում

XX դարասկզբի հայ երաժշտարվեստի երախտավորների շարքում իր արժանի տեղն է գրավում կոմպոզիտոր և խմբավար, **Գրիգոր Սյունի** կեղծանունով հանդես եկած Գրիգոր Միրզայանը, որն իր ստեղծագործությամբ և, ի մասնավորի, ժողովրդական երգերի մշակմամբ զգալի դեր կատարեց հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի բյուրեղացման գործում: Մելիքների տոհմից էր սերում Գրիգորի պապի հայրը՝ Մելիք Հովհաննես Միրզաբեկյան-Սյունին, նույն ինքը՝ աշուղ Թեյմուրը, որը Պարսից Ֆաթալի շահի հրավերով երկար տարիներ անցկացրել էր պալատում, երգել ու հեղինակել բազմաթիվ պարսկական թեսնիֆներ: Շարունակելով հոր արվեստը՝ Թեյմուրի զավակներից մեկը շուտով Խնձորեսկից տեղափոխվում է Շուշի, դառնում աշուղ Դադասի Սյունեցի, այնուհետև՝ Աթաբեկ: Դադասու որդիներից Հովհաննեսը՝ ժողովրդական բանաստեղծ-երգիչ և մանրանկարիչ աշուղ Վարանդեցին, ամուսնանում է Աննա Հախունցի հետ: Ամուսինները մեկը մյուսի ետևից կորցնում են իրենց տասնչորս զավակներին դեռևս մանուկ հասակում: Որդեկորուս հոր, արդեն նավթարդյունաբերության ու պղնձարդյունաբերության ասպարեզի խոշոր սեփականատեր դարձած մեծահարուստ Վանի բեյի մեծագույն երազանքն էր զավակ ունենալը: 1876-ի սեպտեմբերի 10-ին Գանձակի (հետագայում՝ Կիրովաբադ) գավառի Գետաբեկ գյուղում ծնվում է նրա տասնհինգերորդ զավակը՝ Գրիգոր Հովհաննես Վարանդեցի Դադասի Միրզաբեկյան Սյունին: Երկու տարի անց Սյունիների ընտանիքը բնակություն է հաստատում Շուշիում: Տագնապած նորածնի առողջական թույլ վիճակով և նախորդ երեխաների դժբախտ ճակատագրով, Գրիգորի ծնողները յոթ տարի շարունակ դիմում են տարբեր գուշակների և կատարում նրանց թելադրանքները: Առողջ մեծացած Գրիգորի 7-ամյակը հայրը նշում է աննախադեպ ճոխությամբ. այդ օրը նա որդուն նվիրում է իր ձեռքով պատրաստած դափն ու սուրը և ասում՝ «…առ այս դաֆը և երգե ամեն անգամ, որ սիրտդ նեղանա և սրտիդ ցավերը փարատին: Իսկ երբ մեկը քեզի ցավ պատճառե և կամ վրադ բռնանա, առ այս սուրը և կուրծքը խրե… բայց, որդի՛, տե՛ս որ այս դաֆն ու սուրը պարապ ժամանցներու կամ խենթ նպատակներու համար չի գործածես»[1]: Սերելով աշուղների տոհմից, օժտված լինելով հնչեղ ձայնով ու երաժշտական վառ ընդունակություններով, Գրիգորը վաղ հասակում տարվում է երաժշտությամբ:

Նրա մանկության տարիներն անցնում են Շուշիում, որտեղ և ստանում է տարրական կրթությունը: Սակայն շատ շուտով նա կորցնում է հորը և որպես երգիչ

[1] Բրուտյան Ց. 2000, 105:

ժողովրդական երաժիշտներ Արտեմի ու Բալայի հետ թափառում գյուղից գյուղ: 1904-ին ավարտում է Պետերբուրգի կոնսերվատորիան՝ աշակերտելով Ն.Ռիմսկի-Կորսակովին, Ա.Լյադովին, Ա.Գլազունովին, ղեկավարում տեղի հայկական եկեղեցու երգչախումբը, ներդաշնակում հոգևոր երգեր, կատարում ժողովրդական երգերի մշակումներ, գրում մեներգեր և պոլիֆոնիկ գործեր: Երաժշտություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Հայոց դրամատիկական ընկերության միջոցով բեմադրել իր «Արեգնազան» օպերետը, գրել «Ասլի և Քարամ» երգախառն դրաման: Հետագայում զբաղվել է համերգային գործունեությամբ: 1908-ին շրջագայելով հայաբնակ տարբեր վայրերում՝ Տրապիզոն, Կարին, Թիֆլիս, Թեհրան, Կ.Պոլիս ևն, 1923-ից՝ ԱՄՆ, հավաքել է ժողովրդական եղանակներ, դրանք ներդաշնակել և կատարել իր երգչախմբերով՝ նպաստելով հայ ժողովրդական լայն զանգվածներում բազմաձայն երգեցողության տարածմանը:

1921-ի օգոստոսին Սյունին վերադառնում է Թիֆլիս՝ երկարատև թափառական կյանքից ու լարված գործունեությունից վատթարացած առողջական վիճակով, տևական հանգստի կարոտ: Նույն թվականի աշնանը առողջությունը վերականգնելու ակնկալիքով և այնուհետև Հայաստանում բնակություն հաստատելու մտադրությամբ նա ընտանիքի հետ մեկնում է Պոլիս: Բայց իրադարձությունների ընթացքը նրան տանում է ԱՄՆ, որտեղ էլ անցնում է նրա հետագա ողջ կյանքը: Բնակվելով Ֆիլադելֆիայում և շրջելով ԱՄՆ հայաբնակ քաղաքներով՝ Սյունին շարունակում է իր երաժշտական-հասարակական գործունեությունը: Նա կազմակերպում է երգչախմբեր ու համերգներ տալիս Բոստոնում, Ուոթրթաունում, Նյու-Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Դետրոյտում, Փրովիդենսում և այլուր՝ ունկնդրի կողմից արժանանալով բացառիկ ընդունելության: Համերգներից երկուսը (1924-ի հունվարի 27-ին և տասը տարի անց՝ 1934-ի փետրվարի 24-ին) շահում են միջազգային մրցանակներ: 1930-ի փետրվարի 19-ին Ֆիլադելֆիայում աննախադեպ հաջողությամբ Սյունին բեմադրում է հայկական և արևելյան թեմաներով գրված իր «Պայքար և զոհողություն» մանկական օպերան, որի բոլոր դերակատարները մանուկներ ու պատանիներ էին: Սյունին Հարություն Մեհրապյանի հետ համագործակցությամբ ԱՄՆ-ում հիմնում է «Ամերիկահայ երաժշտական միությունը», որն արգասաբեր գործունեություն ծավալեց ամերիկահայ գաղթօջախի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման գործում:

Սակայն Հայրենիքի կարոտը կրծում էր կոմպոզիտորի հոգին: Ի մխիթարություն՝ նա հայրենիք է ուղարկում երաժշտական գործիքներ սիմֆոնիկ նվագախմբի համար, Երևանի կոնսերվատորիային է նվիրում մի շարք երաժշտական գործիքներ, որոնց պակասն այն ժամանակ խիստ զգում էր սիմֆոնիկ նվագախումբը, նորաբաց երաժշտական հրատարակչության համար անհրաժեշտ իրեր, նոտաներ, պարտիտուրների համար թղթեր…

Սյունին հիմնադրում է երաժշտական ստուդիա, ղեկավարում սիրողական երգչախմբեր ու հանդես գալիս համաշխարհային մրցույթներում, գրում է և հրատարակում բանվորական-հեղափոխական երգեր և խորհրդահայ ժողովրդի նոր կյանքը գովերգող ստեղծագործություններ:

ԱՄՆ-ում ապրած տարիներին Սյունին հանդես է եկել որպես Խորհրդային Հա-

յաստանի բարեկամ, եռանդուն մասնակցել ՀՕԿ-ի գործունեությանը: ԱՄՆ-ում ի հայտ են գալիս մի շարք հիվանդություններ, որոնք քայքայում են երաժշտի առողջությունը, բայց հուսահատվելու փոխարեն՝ Սյունին ասում էր. «Քեփդ տեղն արա, ինձի ղարապաղցի կըսեն»[1]: Սրտի տագնապ, տևական ծանր շաքարախտ, ապա՝ կոկորդի քաղցկեղ, որն էլ գերեզման իջեցրեց կոմպոզիտորին հազիվ 63 տարեկան հասակում: Վախճանվեց Սյունին 1939-ի դեկտեմբերի 18–ին, Ֆիլադելֆիայում (ԱՄՆ)՝ Հայրենիքում վերջին հանգրվանը գտնելու փափագով: Նրա և կնոջ աճյունասափորները Հայաստան հասան 1959-ին, որդու՝ Ռուբենի միջոցով և 1968-ին «վերջապես իր նյութեղեն հյուլեները խառնվեցին առեղծվածային Հայաստան աշխարհի նվիրական հողին, բայց ոչ իր երազած, իր պաշտած Ղարաբաղի…»[2]:

Ցավոք, մինչև օրս Սյունիի ստեղծագործական ժառանգությունը լրիվ հրատարակված, նույնիսկ՝ հավաքված և ի մի բերված չէ: Նրա ժառանգությունը բաղկացած է ժողովրդական երգերի մշակումներից, հայ նշանավոր բանաստեղծների գրական խոսքի երաժշտականացումը հանդիսացող՝ ժողովրդական մեղեդիների վրա հիմնված երգերից ու ռոմանսներից, թատերական ներկայացումների համար գրված երաժշտական կտորներից և նվագախմբային որոշ ստեղծագործություններից: Իր գործունեության վերջին շրջանում Սյունին մշակեց բանվորական հեղափոխական երգեր («Անվախ ընկեր», «Դու զոհ գնացիր», «Ինտերնացիոնալ»), 1930–ական թվականներին Խորհրդային Հայաստանում ստեղծված մասսայական երգերի նմանողությամբ հորինեց «Նոր կյանքի երգեր» շարքը (1934):

Դաշնամուրի նվագակցությամբ ինքնուրույն մեներգերը (Հ. Թումանյանի «Ինձ մի խնդրիր», Ավ. Իսահակյանի «Ախ, ալ վարդի» ևն) գրված են հայ քաղաքային ժողովրդական երաժշտության ոճով, ունեն արտահայտիչ մեղեդիներ: Սրանք, ինչպես և բուն ժողովրդական երգերի մշակումները (օրինակ՝ «Նեննի» օրորոցայինը), զգալի դեր են խաղացել ազգային ռոմանսի ձևավորման ու զարգացման գործում:

Կոմպոզիտորի ստեղծագործության առավել արժեքավոր բաժինն են գեղջկական երգերի խմբերգային մշակումները, որոնցից լավագույնները («Սարերի հովին մեռնիմ», «Սարերը հովել ա», «Ալագյազ» ևն) առանձնանում են ընդհանուր բարեհնչունությամբ և հայ խմբերգային երաժշտության դասական ժառանգության մասն են կազմում: Սյունին թե՛ խմբերգային և թե՛ մեներգային մշակումներում պահպանում է հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները՝ հասնելով ոճական անաղարտության: Նրա երգերից շատերը, այդ թվում՝ «Սարերի հովին մեռնեմ», «Սարեն կուգա ձիավոր», «Ալագյազ», «Ախ, ալ վարդի», «Եթե մի օր», «Ինձ մի խնդրիր» երգերն իրենց մշտական տեղն ունեն համերգային երկացանկում:

1881-ին Շուշիում է ծնվել ու իր նախնական կրթությունն ստացել հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական հասարակական գործիչ **Եղիշե Բաղդասարյանը** (Բաղդասարյանց, 1881, Շուշի - 1919, Արմավիր, Հյուսիսային Կովկաս): 1900-ին Ե. Բաղդասարյանը մեկնել է Պետերբուրգ, սովորել կոնսերվատորիայում, 1901-ից՝ Ա. Կ. Լյադովի ստեղծագործական դասարանում: Դեռևս ուսումնառության ընթացքում նա զբաղվել է և՛ խմբավարությամբ, և՛ ստեղծագործությամբ, և՛

[1] Բրուտյան Ց. 2000, 113:
[2] Նույն տեղում:

երաժշտական խմբագրական աշխատանքով: Կոնսերվատորիան ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Մոսկվայում, ղեկավարել Լազարյան ճեմարանի ուսանողական երգչախումբը, դասավանդել երաժշտական տեսական առարկաներ: Կովկասի հայաբնակ քաղաքներում (Բաքու, Արմավիր, Շուշի և այլուր) կազմակերպել է երգչախմբեր և ժողովրդական գործիքների նվագախմբեր, որպես խմբավար և դիրիժոր հանդես եկել համերգներով: 1910-ին նա հիմնադրել է Մոսկվայի հայկական երգչախմբային ընկերությունը և ղեկավարել նրա գործունեությունը: Իբրև խմբավար հանդես է եկել Բաքվում, Արմավիրում, իսկ ամռան ամիսներին նրա հայտնությունը Շուշիում մեծ աշխուժություն է առաջացրել երաժշտական կյանքում, որովհետև անմիջապես կազմել է երգչախումբ, ժողովրդական գործիքային անսամբլներ և համերգներ տվել:

Ե. Բաղդասարյանի մասնակցությամբ է կազմվել և Պետերբուրգում հրատարակվել «Քնար մուզայի» բանաստեղծությունների ժողովածուն (1900), Հ.Այվազովսկու հիշատակին նվիրված «Գեղարվեստական ալբոմը» (1903), «Արցունքներ» գրական-գեղարվեստական-երաժշտական ժողովածուն (1907): Ե.Բաղդասարյանը երգերի, խմբերգերի, ռոմանսների, ժողովրդական երգերի ու շարականների հեղինակ է, այդ թվում՝ կոմպոզիտորի առաջին երկը՝ Ալ. Ծատուրյանի խոսքերով և Ալ. Սպենդիարյանի ռուսերեն թարգմանությամբ 1901-ին գրված «Մի լար, բլբուլը», ինչպես նաև «Մշո ողբը», «Մաղթանք», «Քեզ» (ռուսերեն), «Արևելյան եղանակներ» դաշնամուրային պիեսները: Գրել է «Անուշ» (1909, ըստ Հովհ.Թումանյանի) և «Արտավազդ Բ» (ըստ Հար. Թումանյանի) օպերաները, «Անտառի մանուկ» մանկական երաժշտական պատկերն ըստ Ղ. Աղայանի, «Գյուլնազ տատի հեքիաթը» մանկական օպերան՝ ըստ Ղ. Աղայանի հեքիաթի:

Շուշիում է ծնվել սովետահայ կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (1944), Բաթումի (1922) և Լենինականի (1924) երաժշտական ստուդիաների հիմնադիր, իր ստեղծագործությամբ և ակտիվ գործունեությամբ հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգային արվեստի զարգացմանը զգալի ավանդ մատուցած **Դանիել Ղազարյանը** (1883, Շուշի - 1958, Երևան), որը, որպես երաժիշտ մկրտվելով Շուշվա թեմական դպրոցում, ընդգրկվելով Կարա-Մուրզայի, Գրիգոր Սյունիի ու Ստեփան Դեմուրյանի երգեցիկ խմբերում և 1921-ին ավարտելով Թիֆլիսի կոնսերվատորիան, շուրջ կես դար ծառայեց հայ երաժշտական մշակույթի առաջընթացին: Դ. Ղազարյանը երգերի ու ռոմանսների, խմբերգերի, շուրջ 300 մանկական երգերի («Սիրուն թիթեռ», «Սագիկ-մագիկ», «Էծիկ» և այլն), խմբերգերի, երաժշտական պատկերների («Պապն ու շաղգամը», «Փիսիկի գանգատը») և մանկական հինգ օպերաների («Հաղթված բազեն», «Գայլը», «Անգործ մանուկը», «Տիկնիկի պսակը» և «Փոքրիկ կառուցողները»), դրամաների համար գրված երաժշտության («Սոս և Վարդիթեր», «Գիքոր»), նվագախմբային ու դաշնամուրային ստեղծագործությունների հեղինակ է: Նրա գործունեության հիմնական բնագավառը երգն է. մեծ ժողովրդականություն են վայելում «Ուռին», «Լանջեր մարջան», «Սար դարդեր», «Աշնան գիշեր», «Անուշ գարուն», «Քույր իմ նազելի»... Իր երգերի համար ընտրել է Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ալ. Ծատուրյանի,

Շ. Կուրղինյանի, Գ. Սարյանի, Սարմենի. Վ. Միրաքյանի, Հ. Հայրապետյանի, Մ. Կորյունի, Վ. Աղասյանի, Մետաքսեի բանաստեղծությունները:

Խմբավար Դ. Ղազարյանը, հետևելով իր ուսուցչի՝ Ստեփան Դեմուրյանի օրինակին, հընթացս իր գործունեության 50 տարիների տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Նոր Բայազետում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Ղարսում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Խարկովում, Ռոստովում, Նոր Նախիջևանում, Արմավիրում, Կրասնոդարում, Վլադիկավկազում, Նովոռոսիյսկում, Բաթումում, Սուխումում, Բորժոմում, Սոչիում, Ախալցխայում, Ախալքալաքում, Աշխաբադում, Գանձակում, Շուշիում, Ստեփանակերտում, Կաղզվանում, Նուխիում և այլուր կազմել է շուրջ 250 երգեցիկ խումբ և տվել ավելի քան 1000 համերգ: Մասշտաբային գործունեություն է ծավալել գեղարվեստական ինքնագործունեության բնագավառում. կազմակերպել է երգչախմբեր Երևանի Ուսուցչի տանը, Հաղթանակի այգում, Կարմիր բանակի տանը: Հաճախակի ելույթներ է ունեցել նրա կազմակերպած կույրերի քառաձայն երգեցիկ խումբը:

Մանկավարժ Ղազարյանը ավելի քան 50 տարի աշխատել է հանրակրթական դպրոցներում՝ որպես երգ-երաժշտության ուսուցիչ: Պատրաստել է երգեցողության դասատուների բազմաթիվ որակյալ կադրեր, իբրև մանկավարժական կաբինետի փորձառու մեթոդիստ՝ դասատուների համար կազմել ծրագրեր, դպրոցական երգարաններ և այլն:

Երաժշտական-հասարակական գործիչ Ղազարյանը 1923-ին կազմակերպել է Բաթումի ժողովրդական երաժշտական ստուդիան, որը մեկ տարի անց վերածվեց ժողովրդական կոնսերվատորիայի, իսկ 1924-ին՝ Լենինականի երաժշտական ստուդիան, որը հետագայում վերածվեց երաժշտական դպրոցի: 1937-ին Ղազարյանը երաժշտական ստուդիա է կազմակերպել նաև Երևանի Կարմիր բանակի տանը: 1933-ին Պիոներների պալատում Ղազարյանի ջանքերի շնորհիվ իր գործունեությունն է վերսկսում Երևանի մանկական օպերան, որտեղ մինչև 1939 թվականը բեմադրվում են Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», «Գայլը», Ս. Մուրադյանի «Շունն ու կատուն», Վ. Ումր-Շատի «Ուլիկները», Ա.Մայիլյանի «Տիկնիկ-զիզիկը», Ա. Մանուկյանի «Չարի վերջը» և մանկական այլ օպերաներ: Եվ պատահական չէ, որ 1997-ին՝ շուրջ չորս տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո, Շուշիում դպրոցականների առջև իր դռները բացած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում միակ երաժշտական միջնակարգ մասնագիտական գիշերօթիկ դպրոցը, որտեղ ուսանում են շնորհալի պատանիներ ու աղջիկներ, որտեղ հաջողությամբ գործում են փողային նվագախումբն ու երգչախումբը, իր հիմնադրման օրվանից կրում է Դանիել Ղազարյանի անունը: Դ. Ղազարյանի անունն է կրում նաև Արթիկի երաժշտական դպրոցը:

Շուշիում է ծնվել հայ օպերային երգիչ, քնարադրամատիկ տենոր **Արշակ Կոստանյանը** (1865-1920): Սովորել է Կազանի համալսարանում, 1892-ին աշակերտել նշանավոր երգչուհի Նինա Դարիալի-Ղորղանյանին, երաժշտական կրթությունը շարունակելու նպատակով 1893-ին մեկնել Իտալիա: Վերադառնալով Ռուսաստան՝ երգել է Վորոնեժի, Խարկովի, Իրկուտսկի, Կազանի, Սարատովի և այլ

քաղաքների օպերային թատրոններում: 1903-ին հաստատվել է Մոսկվայում, երգել Սոլոդովնիկովի նշանավոր օպերային խմբում: Աչքի է ընկել գրավիչ, անկաշկանդ երգեցողությամբ: Նրա կատարած դերերգերից են՝ Հերցոգ, Ալֆրեդ (Վերդի, «Ռիգոլետտո», «Տրավիատա»), Ֆաուստ (Գունո, «Ֆաուստ»), Ալմավիվա (Ռոսսինի, «Սևիլյան սափրիչ»), Տուրիդդու (Մասկանի, «Գեղջկական պատիվ»), Գերման (Չայկովսկի, «Պիկովայա դամա»), Վլադիմիր Իգորևիչ (Բորոդին, «Իշխան Իգոր»), Եֆիմ, Սակուս (Ա. Ռուբինշտեյն, «Վաճառական Կալաշնիկով», «Ներոն») և այլն[1]: Համերգներով հանդես է եկել նաև ծննդավայրում՝ Շուշիում:

Շուշեցի երաժիշտների ներդրումը արևելյան ժողովրդական գործիքային երաժշտության առաջընթացի գործում

Բոգդան Թումանյանը (1881, Շուշի-1975, Տաշքենդ) 16 տարեկանում Բաքվում կազմակերպում է ժողովրդական գործիքների նվագախումբ, փայլուն նվագահանդեսներ տալիս Բաքվում և Անդրկովկասի այլ քաղաքներում: 1922-ին Բ. Թումանյանը տեղափոխվում է Տաշքենդ, հիմնադրում ժողովրդական գործիքների նվագախումբ՝ երկար տարիներ ղեկավարելով այն: Նա է հիմնադրել Տաշքենդի ռադիոյի ժողովրդական գործիքների նվագախումբը, ստեղծել Տաջիկական և Ույգուրական ռադիոների նվագախմբերը՝ ստեղծելով դրանց նվագացանկը: Մի կողմից՝ նա փոխադրում և նվագախմբի համար գործիքավորում էր արևելյան դասական մեղեդիներն ու պարերգերը, մյուս կողմից՝ յուրացրած հայ և տեղի ժողովրդական երաժշտության լեզուն՝ հորինում սեփական ստեղծագործությունները, որոնցից ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել Ույղուրական ժողովրդական թեմաներով սյուիտը, կարա-կալպակյան երգային ու նվագարանային մեղեդիները, բազմաթիվ երգեր և խմբերգեր ույղուր, ուզբեկ, տաջիկ բանաստեղծների խոսքերով, ջութակի համար՝ «Արևելյան ֆանտազիա», «Հուշեր», «Երաժշտական պահ» և այլն[2]:

Անգնահատելի է շուշեցի երաժիշտ **Հովհաննես Իոանիսյանի** (Հովհաննիսյան, 1881, Շուշի-1938) ներդրումը արևելյան ժողովրդական գործիքային երաժշտության զարգացման գործում: Նա հանդես էր գալիս ոչ միայն որպես մենակատար, այլև զարգացնում ու խորացնում էր անսամբլային ու նվագախմբային կատարողականությունը՝ նպաստելով բազմաձայնության արմատավորմանը: 1900-ին Հ. Իոանիսյանն ավարտում է Շուշիի ռեալական դպրոցը: 1910-ին ավարտելով Նովոռոսիյսկի համալսարանի բժշկական ֆակուլտետը՝ նա վերադառնում է Շուշի, ոչ միայն աշխատում որպես լավագույն բժիշկ, այլև կազմակերպում զինվորական նվագախումբ և երկար տարիներ ղեկավարում այն: 1920-ին Հ. Իոանիսյանը տեղափոխվում է Բաքու, հիմնադրում ժողովրդական գործիքների նվագախումբը, որը հետագայում ստանում է «Առաջին ադրբեջանական պետական նվագախումբ» անունը: «Այդ նվագախմբով է, որ Ադրբեջանը Մոսկվայում ներկայացավ մշակույթի և արվեստի անդրանիկ տասնօրյակին»[3]: Նվագախումբը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

---

[1] Տես Բրուտյան Ց. 2000, 242-243:
[2] Տես Բրուտյան Ց. 2000, 239-240:
[3] Բրուտյան Ց. 2000, 241:

Բացի այս նվագախմբից՝ Հ. Իոանիսյանը հիմնադրել է այլ նվագախմբեր ևս (1925, 1927, 1932), այդ թվում նաև կանանց առաջին նվագախումբը: 1938-ին նրան շնորհվում է Ադրբեջանի արվեստի վաստակավոր գործչի կոչում[1]:

Շուշիում է ծնվել գրեթե բոլոր ժողովրդական գործիքների վրա նվագող վարպետ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ **Ալեքսանդր Ալեքսանդրյանը** (1889, Շուշի-1970): 1903-ին ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, ուսման ընթացքում հայ վարպետների մոտ սովորել տարբեր գործիքների վրա նվագել և այնքան կատարելագործվել, որ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո դարձել է քաղաքի փողային նվագախմբի ղեկավարը: 1902-ին Գ. Սյունիի ժողովրդական գործիքների անսամբլում թառահար էր, իսկ ավելի ուշ՝ ժողովրդական անսամբլների ղեկավար: 1921-ին փոխադրվել է Երևան, աշխատել ինքնագործ խմբերի հետ: 1930–36 թվականներին հրավիրվել է Երևանի կոնսերվատորիա և ղեկավարել արևելյան գործիքների ամբիոնը: 1936–37-ին ղեկավարել է Հայֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը, 1938–67-ին՝ Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի ժողովրդական գործիքների խումբը: Վիրտուոզ մենակատարն ու հմուտ ղեկավարը նաև իր անսամբլների համար հորինել է ազգային ժողովրդական ու արևելյան մեղեդիների ռիթմաինտոնացիոն կառույցների տարրերով ներթափանցված երգեր և պարեղանակներ: Դրանցից են այդ նվագախմբերի կատարմամբ հնչած «Դիլիջան», «Զույգ սև աչեր», «Զուլեյկայի պարը», «Նազելի», «Նաիրյան աղջկա պարը», «Սևանի», «Նունե», «Արտաշատի» և այլն[2]:

Շուշեցի հռչակավոր թառահարներից են **հայր և որդի Մելիքյանները**՝ հատկապես արևելյան դասական մուղամաթների փայլուն գիտակներն ու վիրտուոզ մեկնաբանները, որոնց փառքը տարածվել էր արևելյան երկրներում: Հայրը՝ Գրիգոր Մելիքյանը (1859-1929, Շուշի), դարձավ որդու՝ Բալայի ուսուցիչը և նրան փոխանցեց իր վարպետության գաղտնիքները:

Հայ թառահար **Բալա Մելիքյանը** (Մելիքով, 1888-1935, Շուշի) հատուկ երաժշտական կրթություն չի ստացել, որպես երաժիշտ ձևավորվել է Շուշիի ժողովրդա-երաժշտական միջավայրում, հոր՝ նշանավոր թառահար Գրիգոր Մելիքովի ազդեցությամբ: 19 տարեկանում արդեն Բալա Մելիքյանը ճանաչված թառահար էր և իր գործունեությամբ կապված էր նաև Բաքվի, Թիֆլիսի ու Երևանի երաժշտական կենտրոնների հետ: Վիրտուոզ թառահար, մուղամների անզուգական մեկնաբան Մելիքյանն իր կազմակերպած գործիքային անսամբլներով համերգներով որպես մենակատար և նվագակցող հանդես է եկել նաև Մոսկվայում և Լենինգրադում:

Շուշիի երաժշտական կյանքի համերգային զարկերակը

Շուշիում շատ ակտիվ էր տրոփում երաժշտական կյանքի զարկերակը: Դրանում մեծ նշանակություն ունեցավ Շուշվա թեմական դպրոցը, որտեղ երգ-երաժշտության դասավանդումը գտնվում էր բարձր մակարդակի վրա, իսկ դպրոցի երգեցիկ խումբը հաճախ էր համերգներով հանդես գալիս՝ կատարելով ժողովր-

[1] Տես Բրուտյան Ց. 2000, 240-241:
[2] Տես Բրուտյան Ց. 2000, 241:

դական և հայրենասիրական երգեր: Շուշիի թեմական վեցդասյա դպրոցում երաժշտության դասընթացը տևում էր վեց տարի, որից առաջին երեք տարիների ընթացքում աշակերտները սովորում էին երգեցողություն, իսկ հաջորդ երեք տարիներին յուրացնում էին հայկական նոր ձայնագրությունն ու երգը: Դպրոցի շրջանավարտները կատարելապես տիրապետում էին հայկական ձայնագրությանն ու ազատ թելադրություններ գրում: Դժվար է գերագնահատել Շուշիի թեմական դպրոցի դերը հայ երաժշտության նվիրյալների դաստիարակման գործում: Շուշիի թեմական դպրոցը, ըստ էության, մեկն էր այդ ժամանակաշրջանում հայ երաժշտական իրականության մեջ գործող երեք կենտրոններից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կողքին, որտեղ խիստ կարևորվում էր երգ-երաժշտության դասավանդման բարձր մակարդակի ապահովումը, որակյալ երաժշտական կադրերի պատրաստումը: Շուշիի թեմական դպրոցում են որպես երաժիշտներ ձևավորվել Գրիգոր Սյունին, Դանիել Ղազարյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը և այլք:

1892-ին Շուշիի Մարիամյան և թեմական դպրոցներում որպես երաժշտության դասատու աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, քսանամյա **Ստեփան Դեմուրյանը** (1872–1934): Շուշիում նա աշխատում է մինչև 1895-ը, ապա ընդմիջումներով՝ մինչև 1917-ը, մեծապես նպաստելով հայ երգի տարածման գործին: Կարճ ժամանակ անց Ստեփան Դեմուրյանը դառնում է Շուշվա աշակերտության ամենասիրելի ուսուցիչը: «Շատերը սիրեցին նրան ու նրա առարկան,- հետագայում իր ուսուցչի մասին կգրի նրա արժանավոր սանը՝ Դանիել Ղազարյանը,- Եվ եթե թեմական դպրոցը տվեց բազմաթիվ գրագետ երաժշտասերներ, որոնք շնորհակալ գործունեություն ծավալեցին Ղարաբաղում և այլուր, ապա դրա համար նախ և առաջ պարտական ենք Ստեփան Դեմուրյանին»[1]: Բախտորոշ էր նրանց հանդիպումը Դանիելի համար: Ահա այստեղ էլ վճռվում է երաժիշտ դառնալու նրա ճակատագիրը: Եվ պատահական չէ, որ հետագայում նա, հետևելով իր ուսուցչի՝ Դեմուրյանի օրինակին, պիտի երգեցիկ խմբեր կազմեր ու համերգներով հանդես գար տարբեր հայաշատ քաղաքներում: Ստեփան Դեմուրյանի կազմակերպած քառաձայն երգեցիկ խումբը տոն օրերին երգում էր ճարտարապետական նշանավոր կոթողի՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում:

1903-ի ապրիլի 13-ին Խանդամիրյան թատրոնում Ստեփան Դեմուրյանի ղեկավարությամբ տեղի է ունենում Շուշիի թեմական դպրոցի երգեցիկ խմբի համերգը, որի ընթացքում հնչում են «Բամփ որոտան», «Գյուլում ջան», «Սիրո երգ», «Արաքսի արտասուքը», «Ջան մարալ», «Եխսո ջան», «Համեստ աղջիկ», «Հաբրբան», «Լռեց, ամպերը», «Հորովել», «Ահա հրեշտակ», ժողովրդական երգեր[2], իսկ օգոստոսի 3-ին Ստեփան Դեմուրյանի ղեկավարությամբ տեղի ունեցած Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգի ծրագրում ներառված էին հայկական ժողովրդական «Ջան գյուլում», «Հաբրբան», «Եխսո ջան», «Ջան, մարալ

[1] Տես Ասատրյան Ա. 2007, 233-243:

[2] XX դարի առաջին քսանամյակի Շուշիի երաժշտական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունների համար օգտվել ենք հետևյալ աշխատություններից՝ Մազմանյան Ռ. 2006, 208 էջ: Մազմանյան Ռ., ձեռագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:

ջան» երգերը, «Ծիծեռնակներ» վրացական երգը, Շուբերտի սերենադը, Չայկովսկու ռոմանսներից մեկը[1]:

1911-ի հունիսի 21-ին Շուշիի ժողովարանի դահլիճում տեղի է ունենում կոմպոզիտոր Ս. Դեմուրյանի և երգիչ Ն. Ղարաքեշիշյանի համերգը, իսկ նոյեմբերի 27-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցած համերգին ելույթ են ունենում հայկական սիրողական երգեցիկ խումբը՝ Ս. Դեմուրյանի ղեկավարությամբ, ֆլեյտահար Դ. Վինոգրադովը, բալալայկահարների նվագախումբը՝ Ն. Թեյմուրազյանի ղեկավարությամբ, ջութակահար Ս. Փափազյանը: Դաշնամուրի նվագամասը կատարում է Ս. Դեմուրյանը: 1912-ի հուլիսի 25-ին հասարակական ժողովարանի ամառային դահլիճում տեղի է ունենում Շուշիի հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը՝ Ս. Դեմուրյանի ղեկավարությամբ: Մենակատարներ-երգիչներ Ս. Դեմուրյան, Գ. Պողոսյան: Ծրագրում՝ Ք. Կարա-Մուրզա՝ հատվածներ «Շուշան» օպերայից, Կոմիտաս՝ «Հորովել», Չայկովսկի՝ «Աշուն», հայկական ժողովրդական երգեր՝ «Օրորոցի երգ», «Ջան մարալ», «Սիրեցի, յարս տարան», «Ճախարակ»:

Ակտիվ երաժշտական կյանքով ապրող Շուշիում հաճախակի էին համերգներ կազմակերպվում: 1894-ին Շուշի է ժամանում **Քրիստափոր Կարա-Մուրզան,** երգչախումբ կազմում և համերգներով հանդես գալիս ժողովրդական և հոգևոր երգերի կատարմամբ: Երգեցիկ խմբի համերգներին ակտիվորեն մասնակցում է նաև Դանիել Ղազարյանը[2]:

Քր. Կարա-Մուրզայի հաջորդ այցելությունը Շուշի 1901-ին էր. մայիսի 20-ին տեղի է ունենում նրա կազմակերպած և ղեկավարած Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը, որին անդրադառնում է «Մշակը»՝ 1901-ի մայիսի 10-ի N 100-ում: Շուշիի Խանդամիրյան թատրոնի դահլիճում հունիսի 5-ին, 12-ին և 20-ին տեղի ունեցած 70 հոգուց բաղկացած սիրողական քառաձայն երգեցիկ խմբի համերգների մասին են պատմում «Մշակի» հունիսի 12-ի, 19-ի և հուլիսի 3-ի համարներում տպագրված նյութերը: Իր՝ Շուշիի համերգաշրջանը Կարա-Մուրզան եզրափակում է հայկական սիրողական երգեցիկ խմբի հուլիսի 22-ի համերգով, որի ծրագրում տեղ էին գտել բացառապես ժողովրդական երգերի կատարումները[3]:

Ահա թե ինչպես արձագանքեց երաժշտական քննադատությունը հունիսի 12-ին տեղի ունեցած համերգին. «Ամսիս 12-ին կայացաւ երաժշտապետ Կարա-Մուրզայի երկրորդ և վերջին համերգը... «Ձմեռն անցավ» դուէտի մէջ օր. Տէր-Սահակեան և օր. Տէր-Միքաէլեան շնորհալի էին, իսկ «Ջրօրհնեաց գիշերը», որտեղ աղքատները ժողովված երգում էին «Ցուրտը փչեց», մի այնպիսի հետաքրքրութիւն պատճառեց հանդիսականներին, որ յարգելի երաժշտագէտին որոտալից ծափահարեցին և նուիրեցին մի շքեղ ծաղկեայ պսակ թարմ ծաղիկներից և թանաքաման...

---

[1] Մազմանյան Ռ. 2006, 65:

[2] Անշուշտ, Կարա-Մուրզայի համերգները մեծ տպավորություն են թողնում Դ. Ղազարյանի վրա: Հետո՝ տարիներ անց, 1912-ի ապրիլի 8-ին Կաղզվանի հայկական դպրոցի դահլիճում Դանիել Ղազարյանի ղեկավարած աշակերտական երգեցիկ խումբը Կարա-Մուրզայի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ պիտի հանդես գար համերգով, որի ծրագրում ընդգրկված էին Կարա-Մուրզայի խմբերգերը:

[3] Մազմանյան Ռ. 2006, 30-32:

Չար լեզուները բամբասեցին պ. Կարա-Մուրզային և նա բաւականացաւ մեր քաղաքում միայն երկու կօնցերտով...»[1]:

Իսկ բամբասանքի պատճառը հետևյալն էր. «...մարդ աչքերին չէ հաւատում, երբ բեմի վրայ տեսնում է օրիորդներին խառն տղաների հետ: Ինչպէս, Շուշի, և այդպիսի քայլ, ուր «այանների» աչքում այդպիսինները «դուրս ընկածներ» են հաշւում, ուր տղայի և օրիորդի իրար հետ ունեցած մի փոքրիկ խոսակցութիւնը ապագայ ամուսնութեան գրաւական են ընդունում, ուր կիսաինտելիգենտ մարդկանց շրջանում անգամ բամբասանքները առօրեայ կեանքի խօսակցութեան որպես անհրաժեշտ նիւթ են ծառայում...»[2]:

Մեծ հաջողությամբ է անցնում հունիսի 20-ին տեղի ունեցած համերգը ևս. «Յունիսի 20-ին Պ. Կարա-Մուրզան տուեց իր երկրորդ ու վերջին կօնցերտը ու մեկնեց Շուշուց: Տասներեք զանազանակերպ կտորներից կազմված ծրագիրը կատարվեց աւելի քան բարեխղճութեամբ և թողեց հանդիսականների վրա խոր և հաճելի տպաւորութիւն: Bis-երին և անկեղծ ծափահարութիւններին վերջ չը կար: Պատուարժան խմբապետը ստացաւ, իբրև շնորհակալական հաւաստիք, թանգագին ընծայ և կենդանի ծաղիկներից շինած մի շքեղ պսակ...»[3]:

Համերգից ոգևորված՝ «...Կօնցերտի վերջում մի քանի երիտասարդներ ներս խուժեցին դերասանական առանձնարանը և գրեթե զօրով դուրս բերեցին բազուկների վրա պ. Կարա-Մուրզային և խիտ բազմութեան առաջ օդի մեջ բարձրացրին ուռռաներով և կեցցեներով... Աղմկալի օվացիայից յետոյ շատերը ներկայացան երաժշտագետին և առանձնակի արտահայտելով իրանց գոհունակութիւնը, բարեմաղթեցին նրան ողջերթ և արատև աջողութիւն...»[4]:

Իսկ Քրիստափոր Կարա-Մուրզայի մահից հետո՝ 1903-ի հուլիսի 1-ին և 4-ին Շուշիում կազմակերպվում են նրա հիշատակին նվիրված համերգներ: Ելույթ է ունենում 70 աշակերտ-աշակերտուհիներից երգեցիկ խումբը՝ Պողոս Կարա-Մուրզայի ղեկավարությամբ: Համերգին մասնակցում է նաև Ս. Դեմուրյանը՝ կատարելով «Համեստ աղջիկ» երգը. «...Թատրօնի դահլիճը ծայրէ ի ծայր լի էր և՛ հայ, և՛ ռուս, և՛ թուրք հասարակութեամբ, որ արտայայտում էր իր գոհունակութիւնը բուռն ծափահարութիւններով և bis-երով... Ծրագրի մէջ նշանակված 12 կտոր երգերից շատերը լաւ էին. լաւ էին մանաւանդ «Բամբ որոտան» և «Վարդ կօշիկ» ժողովրդական երգերը: Պ. Դեմուրեան երգեց «Համեստ աղջիկ»-ը՝ մէջ ընդ մէջ «Զիմ վզին»-ի հետ. վերջինս երգում էր խումբը... Ինչ որ մեզ է վերաբերվում, մենք քաղցր պարտականութիւն ենք զգում արտահայտել պարոնին մեր անկեղծ շնորհակալութիւնը այն եռանդի համար, որով նա աշխատում է կենդանի պահել իր վաստակաւոր եղբօր յիշատակը և արդիւնաւոր դարձնել նրա թողած գեղարուեստական թանգագին ժառանգութիւնը, մանաւանդ, որ իր կօնցէրտների նիւթական արդիւնքը պարոնը ծառայեցնում է հանգուցեալ Կարա-Մուրզայի որբերի օգտին... Լսում ենք, որ առաջիկայ շաբաթ տեղի պիտի ունենայ մի երկրորդ կօնցէրտ ևս,

---

[1] Արցախեցի 1901:
[2] Մ.Ղ. 1901:
[3] Սերմացան 1901:
[4] Սերմացան 1901:

եթէ անակնկալ խոչընդոտներ չը գան առաջ»[1]:

1895-ին, ավարտելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, հայրենի Շուշի է վերադառնում **Գրիգոր Սյունին**, կազմակերպում երգչախումբ և հանդես գալիս իր բազմաձայնած ժողովրդական երգերից կազմված անդրանիկ համերգով[2]:

Շուշիում Գր. Սյունիի հաջորդ համերգը տեղի է ունենում 1903 թ. հուլիսի 24-ին. «Յուլիսի 24-ին Շուշու հոգևոր դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ երկսեռ խմբի համերգը կօնսերվատորիայի ուսանող Գր. Միրզոյեանցի նախաձեռնութեամբ: Եթէ չենք սխալվում, պարոնը առաջին անգամն է, որ համերգ է տալիս Շուշում: Համերգը գրաւել էր ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը, որով միայն բացատրվում է այդ երեկոյեան դահլիճի ծայրէիծայր լիք լինելը: Համերգը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա: Աջող էին մանաւանդ «Իմ եարը», «Արիք Հայկազունքը», «Հելլէ եարն», «Մեր հայրենիք» և այլն: Ամբողջ ծրագրում պ. Միրզոյեանը ունէր և իր սեփական երաժշտութիւնը: Հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ ընդունեց պ. Միրզոյեանին, մանաւանդ նրա ոգևորութեանը չափ չկար, երբ խումբը զինուորական երաժշտական խմբի հետ երգեց «Զեյթունի քայլերգը», որը մի քանի անգամ կրկնվեց: Հասարակութեան մէջ աչքի էին ընկնում և ռուսներ»[3]:

1903-ի հուլիսի 31-ին Շուշիում կայանում է արդեն Պետերբուրգի կոնսերվատորիայի ուսանող, կոմպոզիտոր Գրիգոր Սյունիի համերգը[4]:

Շուշիում երաժշտական կյանքը հատկապես աշխուժանում էր ամռան ամիսներին, երբ հանգստանալու նպատակով Շուշի էին վերադառնում տարբեր կրթօջախներում սովորող և տարբեր վայրերում աշխատող շուշեցի երաժիշտներն ու կազմակերպում համերգներ: Այսպես՝ Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանող, վաղամեռիկ **Եղիշե Բաղդասարյանը**, վերադառնալով իր ծննդավայրը, կազմակերպում է երգեցիկ խումբ, ստեղծում Շուշիում ժողովրդական գործիքների առաջին անսամբլը, մասնակցում տարբեր համերգների ու հանդեսների՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով ունկնդիրների շրջանում:

1901-ի օգոստոսի 1-ին Շուշիի Խանդամիրյան թատրոնում Եղիշե Բաղդասարյանի ղեկավարությամբ ելույթ է ունենում արևելյան նվագախումբը: Համերգին մասնակցում են երգեցիկ խումբը, երգիչներ Ա. Մելքումյանը, Ե.Տեր-Միքայելյանը, Մ. Սարգսյանը, ջութակահար Վ. Միրզոյանը, դաշնակահարուհի Ա. Գալամյանը, քամանչահար Ա. Մելիք-Շահնազարյանը: Ծրագրում ընդգրկված էին Գ. Կազաչենկոյի, Մ. Եկմալյանի, Ե. Բաղդասարյանի, Ս. Դեմուրյանի, Ալ. Սպենդիարյանի ստեղծագործությունները: Դաշնամուրի նվագամասը կատարում է Ե. Բաղդասարյանը[5]:

Վերոհիշյալ՝ «Յօգուտ գրադարանի և չքաւոր ուսանողների»[6] կայացած համերգին արձագանքում է Կարա-Մուրզան: «...Կօնցերտի ծրագիրը բազմակողմանի էր, խումբը երգում էր բաւական լաւ, և եթե մի քանի տեղ վատ էր, դա շնորհիւ

---

[1] Ներքին լուրեր 1903, N 148:
[2] Ասատրյան Ա. 2009, 387:
[3] Ներքին լուրեր 1903, N 166:
[4] Մազմանյան Ռ. 2006, 64:
[5] Մազմանյան Ռ. 2006, 33:
[6] Կարա-Մուրզա, 1901:

Բաղդասարեանցին ներդաշնակողի էր, որի ներդաշնակած ասիական երգերից մի քանիսը անտանելի էին, օր. «Խաւարար են աչերդ»: Ի հարկէ, մի ուսանողից, որը մի տարի է բան սովորում, չէ կարելի աւելին պահանջել բայց երևում է, որ նա աշխատել էր և առհասարակ աշխատասեր է: Լաւ էր ասիական օրկէստրը, միայն հարկաւոր է նրա վրա ասիական ներդաշնակած եղանակներ նուագել, եւրոպականները վատ տպաւորութիւն են թողնում. ամենից աւելի մեզ դուր եկաւ ուսանող Մ. Շահնազարեանի նուագելը ասիական ջութակի վրա. նրա քնքոյշ ձայները կարծես վիոլօնչելլի ֆիլոժելետները լինէին...»[1]:

Համերգին հնչում են Տիգրան Չուխաճյանի «Զեյթունցիների քայլերգը»՝ ռուս կոմպոզիտոր Գրիգորի Կազաչենկոյի մշակմամբ, Մ. Եկմալյանի «Ով դու բարեկամ» երգը, Ե. Բաղդասարյանի մշակումներն ու ստեղծագործությունները, հայկական և ռուսական ժողովրդական երգեր[2]:

Մեկ տարի անց՝ 1902 թ., Ե. Բաղդասարյանը, կոնսերվատորիայի վարչությունից 100 ռուբլու չափով կրթաթոշակ ստանալով, գալիս է Շուշի և իր սեփական միջոցներով կազմակերպում է համերգ: Համերգին հանդես է գալիս Ե. Բաղդասարյանի 50 հոգուց բաղկացած արևելյան նվագախումբը և քառաձայն երգչախումբը, տեղ են գտնում նաև դաշնամուրային, ջութակի և վոկալ կատարումներ: «Օգոստոսի 11-ին, Մ. Խանդամիրեանի թատրոնական դահլիճում կայացաւ կայսերական կոնսերվատորիայի ուսանող պ. Ե. Բաղդասարեանի համերգը: Թատրոնում հաւաքվել էր մեծ բազմութիւն: Քառաձայն խումբը երգում էր ներդաշնակ: Բացի խմբական երգերից երգեցին մի քանի հայերէն եւ ռուսերէն romանսներ: Պ. Բաղդասարեանի հեղինակած «Քեզ» romանսը երգում էր պ. Ա.Գուրջեան. դաշնամուրի վրա նուագողներից աչքի ընկաւ օր. Հ. Ղալամեան ու Ե. Սարուխանեան. ջութակի վրա նուագում էր ուսանող Տէր-Գրիգորեան: Օր. Մ. Սարգսեան լաւ երգեց «Ոհ, ինչ անուշ». օրիորդի ձայնը փոքրիկ է, բայց գեղեցիկ: Ամենից վերջը «Արեւելեան օրկէստրն» էր, բաղկացած մօտ 50 հոգուց, որոնք նուագում էին թառերի, սազերի, քեամանչաների, ջութակների, նաղարաների եւ շատ արեւելեան գործիքների վրա՝ ներդաշնակած զանազան ձայներով: Արեւելեան օրկէստրը կազմել է պ. Բաղդասարեանը: Այս տարի կոնսերվատորիայի վարչութիւնից 100 ռուբլի նուեր ստանալով՝ պ. Բաղդասարեան եկաւ այստեղ եւ կազմակերպեց 50 հոգուց այդ օրկէստրը: Հասարակութիւնը կրկնել տուեց մի քանի կտորներ եւ շատ գոհ մնաց օրկեստրից»[3]:

1913-ի հուլիսի 18-ին և 20-ին Շուշիի հասարակական ժողովարանի ամառային դահլիճում տեղի ունեցած համերգի ընթացքում ելույթ են ունենում քառաձայն երգեցիկ խումբը՝ Ե. Բաղդասարյանի ղեկավարությամբ, երգչուհի Ս. Ակսացյանը, երգիչ Ս. Մուրադյանը: Ծրագրում՝ Ա. Տիգրանյան - Անուշի մեներգը («Աղջի բախտավոր») համանուն օպերայից, Ե. Բաղդասարյան - «Կործանվեցավ», «Համր-երգ», «Մի գեղեցիկ», «Անցար սարեր», Մ. Եկմալյան - «Լռեց, ամպերը»: Կատարվում են նաև Շումանի, Ռուբինշտեյնի, Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի երգերն ու

[1] Կարա-Մուրզա 1901:
[2] Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N74:
[3] Ներքին լուրեր 1902, N180:

ռոմանսները: Դաշնամուրի նվագամասը կատարում է Վ. Դոբրոսելսկայան:

1913-ի օգոստոսի 1-ին Շուշիի ամառային ակումբի դահլիճում տեղի է ունենում Եղիշե Բաղդասարյանի ստեղծագործություններից կազմված համերգը, որի ընթացքում ելույթ են ունենում երգեցիկ խումբը՝ Ե. Բաղդասարյանի ղեկավարությամբ, երգչուհի Ս. Ակսացյանը, երգիչ Ս. Մուրադյանը: 1913-ի օգոստոսի 15-ին տեղի է ունենում Շուշիի հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը՝ Ե. Բաղդասարյանի ղեկավարությամբ, ամառային ակումբի դահլիճում: Մասնակցում էին երգչուհի Ս. Ակսացյանը և երգիչ Ս. Մուրադյանը:

Շուշիում 1902-ի հուլիսի 3-ին տեղի է ունենում երգիչ, քնարադրամատիկ տենոր **Արշակ Կոստանյանի** (1865-1920) համերգը[1]. «...Յուլիսի 3-ին, Ն. Խանդամիրեանի թատրօնական դահլիճում կայացաւ օպերային երգիչ Ա. Կոստանեանի համերգը: Ծրագիրը բաւական հետաքրքիր էր կազմված: Պ. Կոստանեան լաւ երգիչ է, երգում է զգացված, աշխոյժ տեմպերամենտով, ձայնը արծաթեայ հնչիւն է, տեմբրը դուրեկան, վարի եւ վերի ռէգիստրը քիչ թոյլ է. ինչ վերաբերում է միջին կրծքային ռէգիստրին, բաւական զօրեղ է: Ձայնի դիապազօնը այնքան էլ մեծ չէ, նոյն իսկ գլխային լեա, սի-բեմօլ-ից երգիչը խուսափում է: Պ. Կոստանեան երկար տարիներ երգում է օպերային բեմի վրա եւ հէնց դրան կարելի է վերագրել նրա մի քանի շարժուածքները համերգական էստրադայի վրա. օպերային երգիչը բեմի վրա, բացի երգելուց, խաղում է, նա իրան բոլորովին ազատ է զգում խաղի ժամանակ. նոյնը չէ համերգական էստրադան, որտեղ զանազան բեմական շարժուածքներ արգելվում են. այստեղ երգիչը ինչպէս մի դէկլամատօր միայն զգացված երգով եւ նուրբ արդասանութեամբ պէտք է ազդէ հանդիսականների վրա: Ընդհանրապէս պ. Կոստանեան մեծ աջողութիւն ունեցաւ...ամենից վերջը երգեց ժողովրդական երկու երգ «Կռունկ» եւ «Պաղ աղբիւրի մօտ»: Պ. Կոստանեանցին շատ ծափահարեցին. սիրողներից մասնակցում էր Ս. Ադամեան, որը իբրեւ սիրող, բաւական աջող նուագեց Չայկօվսկու բալլադան ջութակի վրա: Դաշնակցում էր օր. Վ. Շանշիեան, որը ամենայն բարեխղճութեամբ կատարեց իր դերը: Համերգը վերջացաւ ժամը 12-ին. հանդիսականներ բաւական կային, եւ եթէ թատրօնը լիքը չէր, դրա պատճառը կարելի է համարել գների չափազանց թանգութիւնը...»[2]:

Շուշիի Խանդամիրյան թատրոնի դահլիճում օգոստոսի 21-ին երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգի ծրագրում տեղ են գտնում հայկական ժողովրդական երգեր՝ «Պաղ աղբյուրի մոտ», «Լորիկ», «Սիրուհիս, քեզ համար», «Կռունկ», նաև՝ Չայկովսկի[3]: Համերգին մասնակցում է Ե. Բաղդասարյանը: Ս. Բարխուդարյանը կատարում է Ա. Բոյտոյի, Պ. Ի. Չայկովսկու ստեղծագործություններից, ինչպես նաև հայկական ժողովրդական երգեր[4]:

1904-ի հուլիսի 1-ին շուշեցիներն ունկնդրում են երգիչ Արշակ Կոստանյանի համերգը, որի ընթացքում հնչում են հայկական և ռուսական երգեր[5]: «...Երեկ,

---

[1] Մազմանյան Ռ. 2006, 50:
[2] Ներքին լուրեր 1902, N147:
[3] Մազմանյան Ռ. 2006, 51:
[4] Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N76:
[5] Մազմանյան Ռ. 2006, 80:

ամսիս 1-ին, Ն. Խանդամիրեանի դահլիճում «Մոսկվայի օպերային արտիստ» Ա. Կոստանեանը տուեց համերգ, բաղկացած գլխաւորապէս ռուսերէն և երկու հայերէն երգերից: Հասարակութիւնը, ինչպէս և միշտ, շտապել էր լցնել դահլիճը ու այդպիսով ցոյց տալ իր յարգանքը արժանաւոր արտիստին: Համերգը ընդհանրապէս աջող անցաւ: Մանաւանդ բուռն ոգևորութիւն առաջացրեց «Կռունկ» երգը, որ ստիպեցին կրկնել: Պ. Կոստանեանը bis-երին երգեց ծրագրից դուրս ռուսերէն և հայերէն երգեր: Համերգը վերջացաւ 11 ժամին, և հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ...»[1]:

Մի քանի տարի անց՝ 1910 թ. հունիսի 30-ին, Ա. Կոստանյանը համերգով հանդես է գալիս Շուշիի ամառային ժողովարանի դահլիճում՝ կատարելով Ալ.Սպենդիարյանի, Էրլիխի, Չայկովսկու, Գլինկայի, Պուչինիի ստեղծագործություններից:

«Մշակը» 1907-ի ապրիլի 10-ի N 75-ում «Ուսանողական երեկույթ-ներկայացում Շուշում» վերնագրով հոդվածում անդրադառնում է 1907-ի մարտի 31-ին Շուշիի 90 հայ աշակերտներից բաղկացած երգեցիկ խմբի համերգին՝ ուսուցիչ Հարություն Մելիքյանի ղեկավարությամբ, որի ծրագրում տեղ էին գտել Կոմիտասի «Ալագյազ», «Սոնա յար», «Խումար պառկե», Ք. Կարա-Մուրզայի «Վարդ կոշիկս» և Գր.Միրզայանի «Սարեն կուգա» խմբերգերը:

1914-ի ամռանը իր ծննդավայր՝ Շուշի է վերադառնում Դ. Ղազարյանն իր մտերիմ ընկերոջ՝ կոմպոզիտոր Երվանդ Սարդարյանի (1884-1977) հետ: Երիտասարդները Շուշիի թեմական և Մարիամյան օրիորդաց միջնակարգ դպրոցների աշակերտներից և սիրողներից կազմակերպում են երգեցիկ խումբ: Նրանց մեծապես աջակցում է Ստեփան Դեմուրյանը, որն այդ տարիներին աշխատում էր Շուշիում: Պահպանվել են տեղեկություններ առ այն, որ համերգները տեղի են ունեցել Շուշիի ամառային ժողովարանի դահլիճում: Բավական հարուստ է եղել երկացանկը՝ Գրիգոր Միրզայան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Ստեփան Դեմուրյան, Դանիել Ղազարյան, Արմեն Տիգրանյան, Տիգրան Չուխաճյան, ինչպես նաև Մոնյուշկո, Մասնե: Համերգներին, որոնք ջերմ ընդունելության են արժանանում, անդրադարձել են «Մշակը» 1914-ի հուլիսի 13-ի համարում՝ «Գավառական համերգ» վերտառությամբ հոդվածում, և «Հորիզոնը»:

1914-ի հուլիսի 4-ին և 6-ին ամառային ժողովարանի դահլիճում տեղի է ունենում Շուշիի երգեցիկ խմբի համերգը՝ Դանիել Ղազարյանի և Երվանդ Սարդարյանի ղեկավարությամբ, որի ընթացքում ելույթ են ունենում Ս. Դեմուրյանը, Հ. Պողոսյանը, Ե. Սարդարյանը (երգ), Հ. Շահգելդյանը (դաշնամուր)՝ կատարելով Գր. Միրզայանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ստ. Դեմուրյանի, Դ. Ղազարյանի, Ա. Տիգրանյանի, Տ. Չուխաճյանի, Մոնյուշկոյի, Մասնեի ստեղծագործությունները: Դաշնամուրի նվագամասը կատարում են Օ. Դեմուրյանն ու Հ. Շահգելդյանը:

1913-ի օգոստոսի 8-ին Շուշիի ամառային ակումբի դահլիճում տեղի է ունենում երգչուհի Ա.Ստեփանյանի և դաշնակահարուհի Հ. Գյուրջյանի համերգը, որի ծրագրում ընդգրկված էին Բախի և Ռախմանինովի ստեղծագործությունները, գնչուական երգեր և ռոմանսներ: Իսկ 1919-ի օգոստոսի 13-ին Շուշիի ամառային ակումբի դահլիճում ներկայացվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան (դի-

[1] Ներքին լուրեր 1904, N 141:

ռիժոր՝ Լ. Վարդունի, ռեժիսոր՝ Գ. Քոչարյան):

Շուշիի երաժշտական կյանքում կարևոր նշանակություն ունի 1907թ. մարտի 31-ին քաղաքի հոգևոր դպրոցի դահլիճում տեղի ունեցած բարեգործական ներկայացում-համերգը՝ ի նպաստ ռեալական դպրոցի կարիքավոր աշակերտների: Երեկույթի 3-րդ բաժնում ելույթ է ունենում 90 աշակերտ-աշակերտուհիներից բաղկացած երգչախումբը, որը ղեկավարում էր ռեալական դպրոցի ուսուցիչ Հարություն Մելիքյանը: Երգեցիկ խմբի ծրագիրը կազմված էր հիմնականում Կոմիտասի, ինչպես նաև Գ. Սյունիի մշակումներից: Ծրագրում ընդգրկված էին նաև ջութակի և վոկալ կատարումներ. «Դահլիճը ծայրէ ծայր լիքն էր երկսեռ հասարակութեամբ. կային բաւականի ռուսներ երկու սեռից, զինուորականներ և պաշտօնական անձնաւորութիւններ... Երրորդ մասը ամենաաջողն էր. համերգայինը: Ռեալական դպրոցի երիտասարդ ուսուցիչ պ. Յարութիւն Մելիքեանը մօտ 90 հոգուց բաղկացած քառաձայն խումբ էր կազմել և կարճ ժամանակվայ ընթացքում հասարակութեան տուեց բաւականին գեղեցիկ և ներդաշնակ կազմված երգեր: Խումբը երգեց Կոմիտաս վարդապետի «Ալագեազ», «Սոնա եար», «Խումար պառկէ», Կարա-Մուրզայի «Վարդ կօշիկս» և Գր. Միրզայեանի «Սարէն կուգայ» ներդաշնակ երգերը: Գովելի և խրախուսանքի արժանի է պ. Յարութիւն Մելիքեանի եռանդը, որ ինքը այնքան էլ մասնագէտ չը լինելով ձայնագրութեան մէջ, բայց կարողացել էր վերոհիշեալ երգերը կարճ ժամանակում սովորեցնել աշակերտ-աշակերտուհիներին: Բացի հայերէն երգերից պ. Գերասիմօվը (ռուս) սօլօ երգեց մի քանի օպերային կտորներ: Պարոնի ձայնը շատ դուրեկան է և բարձր նօտաներում շատ զօրեղ է հնչում: Այնուհետև երաժշտապետ պ. Լեմոսը ջութակի վրա մի քանի կտորներ նուագեց. նրան ձայնակցում էր դաշնամուրի վրա տիկին Սմորադսկայան: Հանդիսականները թէ Մելիքեանին և թէ միւսներին բուռն ծափահարութեամբ էին դիմաւորում: Համերգից յետոյ տեղի ունեցան եւրոպական և ասիական պարեր մինչև ժամը 3-ը...»[1]:

Իսկ 1908 թ. մայիսի 11-ին Շուշիի հոգևոր դպրոցի ձայնագրության ուսուցիչ Ռուբեն Մանասյանի՝ ի նպաստ տեղի կարիքավոր աշակերտների կազմակերպած համերգի ընթացքում 80 աշակերտներից կազմված երգչախումբը կատարում է Կոմիտասի և Սյունիի մշակումներից. «...Քառաձայն խումբը բաւական աջող երգեց Կոմիտաս վարդապետի ներդաշնակած «Սարի վրով», «Երի-երի ջան», «Մեզ նոր արև», «Ալագեազ», «Մեր դռանը», «Սօնա-եար», «Անձրևն եկաւ», յետոյ Կարա-Մուրզայի «Նոր-Մօդայի խմբերգը», «Ջան գիւլում», և Գ. Միրզայեանի «Ինջլիկ» երգերը: Համեմատաբար թոյլ երգեցին Կոմիտաս վարդապետի «Հիմի էլ լռենք» և «Հոյ ջանում» երգերը: Բայց չը նայելով դրան, պէտք է ասած, որ համերգը բաւարար տպաւորութիւն թողեց...»[2]:

[1] Յովսեփեան Լ. 1907:
[2] Յովսեփեան Լ. 1908:

Եզրակացություններ

1. Շուշին ապրում էր ակտիվ համերգային կյանքով՝ շնորհիվ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Գրիգոր Սյունիի և այլոց բեղուն գործունեության: Տեղի էին ունենում համերգներ ինչպես տեղի երաժշտական կոլեկտիվների ուժերով, այնպես էլ հյուրախաղերով հանդես էին գալիս անվանի երաժիշտները:

2. Համերգային հայտագրերում մեծ տեղ էր գրավում խմբերգային երգեցողությունը: Համերգների ծրագրերում տեղ էին գտնում ինչպես հայ դասականների (Տիգրան Չուխաճյան, Կոմիտաս, Մակար Եկմալյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Ալեքսանդր Սպենդիարյան) ստեղծագործությունները, այնպես էլ ժամանակակից կոմպոզիտորների (Ստեփան Դեմուրյան, Եղիշե Բաղդասարյան, Գրիգոր Սյունի, Անուշավան Տեր-Ղևոնդյան) խմբերգերն ու ժողովրդական երգերի խմբերգային մշակումները: Զգալի տեղ էր հատկացվում նաև արևմտաեվրոպական (Բախ, Ֆրանց Շուբերտ, Ռոբերտ Շուման, Ջակոմո Պուչչինի, Ժյուլ Մասնե, Ստանիսլավ Մոնյուշկո) և ռուս (Միխայիլ Գլինկա, Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով, Պյոտր Չայկովսկի, Սերգեյ Ռախմանինով, Գրիգորի Կազաչենկո) դասական, ինչպես նաև ուկրաինական (Նիկոլայ Լիսենկո) երաժշտության պրոպագանդմանը:

3. Հնչում են ինչպես հայ ժողովրդական երգեր, այնպես էլ ռուսական, գնչուական, վրացական ժողովրդական երգեր:

4. Պրոպագանդվում է նաև հայկական օպերային երաժշտությունը: Համերգների ընթացքում հնչում են հատվածներ Կարա-Մուրզայի «Շուշան» օպերայից, արիաներ Ա.Տիգրանյանի «Անուշից», ներկայացվում է «Անուշ» օպերան:

Այսպիսով՝ կարող ենք վստահաբար արձանագրել այն մեծ դերն ու նշանակությունը, որն ունեցավ Շուշիի՝ «Անդրկովկասի կոնսերվատորիայի» երաժշտական մթնոլորտը հայ երաժշտական գործիչների ձևավորման գործում, որոնք իրենց զգալի ավանդը բերեցին տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս երաժշտության զարգացման գործին:

...2021 թվականի սեպտեմբերի 10-ին լրանում է Գրիգոր Սյունիի ծննդյան 145-ամյակը: Այդ տարեդարձին ընդառաջ՝ կարծում եմ նպատակահարմար կլինի աշխատանքներ իրականացնել Շուշիում կոմպոզիտորի թանգարան ստեղծելու ուղղությամբ՝ ներգրավելով նաև Սյունիի ժառանգներին: Եվ այդ թանգարանի հետ համատեղ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը ձեռնամուխ կլինի կոմպոզիտորի ժառանգության հրատարակության գործին:

2013 թվականին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, Սյունի ընտանիքի հովանավորությամբ հրատարակվեց Սյունիի խմբերգերը պարունակող ստվարածավալ հատորը՝ Ռոբերտ Աթայանի գիտական նախաբանով և վերլուծական դիտողություններով: Եվ այդ հատորը ես սիրով կուղարկեմ Շուշի, որպեսզի դառնա Գրիգոր Սյունիի թանգարանի առաջին նմուշը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Ա. 2009, Գրիգոր Սյունի, Նշանավոր ճեմարանականներ. Պրակ Բ, Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ., էջ 387-394:
2. Ասատրյան Ա. 2007, Դանիել Ղազարյանի կյանքն ու գործունեությունը Շուշիում, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 233-243:
3. Արցախեցի. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», Թիֆլիս, 19 հունիսի, N 131:
4. Բրուտյան Ց. 2000, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, «Ամրոց», 320 էջ, 1 մամուլ ներդիր:
5. Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ե. Բաղդասարյանի ֆ., N 74:
6. Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե. Բաղդասարյանի ֆ., N 76:
7. Կարա-Մուրզա. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», Թիֆլիս, 16 օգոստոսի, N 179:
8. Մազմանյան Ռ. 2006, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 207 էջ:
9. Մազմանյան Ռ. ձեռագիր, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1911-1900, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:
10. Մ.Ղ. 1901, Կարա-Մուրզայի համերգը Շուշում, «Տարազ», Թիֆլիս, N 23, 1901:
11. Յովսեփեան Լ. 1907, Թատրօն եւ երաժշտութիւն, «Մշակ», Թիֆլիս, 10 ապրիլի, N75:
12. Յովսեփեան Լ. 1908, Թատրօն և երաժշտութիւն, «Մշակ», Թիֆլիս, 20 մայիսի, N109:
13. Ներքին լուրեր. 1902, «Մշակ», Թիֆլիս, 17 օգոստոսի, N180:
14. Ներքին լուրեր.1902, «Մշակ», Թիֆլիս, N 147:
15. Ներքին լուրեր. 1903, «Մշակ», Թիֆլիս, 10 հուլիսի, N 148:
16. Ներքին լուրեր. 1903, «Մշակ», Թիֆլիս, 3 օգոստոսի, N 166:
17. Ներքին լուրեր. 1904, «Մշակ», Թիֆլիս, 7 հուլիսի, N 141:
18. Սերմացան. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», 3 հուլիսի, N 143, Թիֆլիս, 1901:

Ամփոփում

Երաժշտական կյանքը Շուշիում

Աննա Ասատրյան

Ծանրակշիռ են Շուշիի դերն ու նշանակությունը Անդրկովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի, ինչպես նաև սփյուռքահայ երաժշտական արվեստի՝ կոմպոզիտորական և կատարողական արվեստի զարգացման գործում: Պատահական չէ, որ քաղաքը կոչվել է «Անդրկովկասի կոնսերվատորիա»: Այստեղ ակտիվ է եղել երաժշտական կյանքը, ինչն էլ իր հերթին նպաստել է շուշեցիների երաժշտական մակարդակի բարձրացմանը: Շուշիում են ծնվել և նրա երաժշտական մթնոլորտում որպես երաժիշտներ ձևավորվել հայ կոմպոզիտորներ և երաժիշտ-կատարողներ Գրիգոր Սյունին, Եղիշե Բաղդասարյանը, Դանիել Ղազարյանը, Արշակ Կոստանյանը, Բոգդան Թումանյանը, Հովհաննես Իոանիսյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Գրիգոր Մելիքյանը, Բալա Մելիքյանը և ուրիշներ: Ծանրակշիռ է

Շուշիի դերը ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման գործում: Անդրկովկասում լայն ճանաչում գտած շուշեցի երաժիշտները նոր աստիճանի են բարձրացրել ժողովրդական երաժշտական գործիքներով (թառ, քամանչա, զուռնա և այլն) կատարողական արվեստը, մշակել-կատարելագործել են արևելյան երաժշտության զանազան ժանրեր:

Շուշեցի երաժիշտներից շատերն իրենց բազմարդյուն գործունեությունը նվիրաբերեցին ոչ միայն հարազատ, այլև տարբեր ժողովուրդների ազգային երաժշտության զարգացման գործին:

Հիմնաբառեր. *Շուշի, երաժշտական կյանք, Գրիգոր Սյունի, Եղիշե Բաղդասարյան, Դանիել Ղազարյան, Արշակ Կոստանյան, Բոգդան Թումանյան, Հովհաննես Իոանիսյան, Ալեքսանդր Ալեքսանդրյան, Գրիգոր Մելիքյան, Բալա Մելիքյան:*

Резюме

Музыкальная жизнь в Шуши

Анна Асатрян

Весомы роль и значение Шуши в деле развития как композиторского, так и музыкально-исполнительского искусства Закавказья, Средней Азии и России, а также зарубежных армян. Не случайно город назывался “консерваторией Закавказья”. Музыкальная жизнь здесь была достаточно активной, что способствовало повышению музыкального уровня шушинцев. Армянские композиторы и исполнители Григор Сюни, Егише Багдасарян, Даниел Казарян, Аршак Костанян, Богдан Туманян, Ованнес Иоанисян, Александр Александрян, Григор Меликян, Бала Меликян и другие родились в Шуши и сформировались как музыканты в музыкальной атмосфере этого города. Весом вклад Шуши и в развитие народного музыкального искусства. Завоевавшие широкую популярность в Закавказье музыканты подняли на новую ступень искусство игры на народных музыкальных инструментах (тар, кеманча, зурна и т.п.), обработали и усовершенствовали различные жанры восточной музыки.

Ключевые слова: *Шуши, музыкальная жизнь, Григор Сюни, Егише Багдасарян, Даниел Казарян, Аршак Костанян, Богдан Туманян, Ованнес Иоанисян, Александр Александрян, Григор Меликян, Бала Меликян.*

Abstract

Music life in Shushi

Anna Asatryan

The role and significance of Shushi is notable in the development of composing and performing musical arts of Transcaucasia, Central Asia and Russia, as well as of Armenians in Diaspora. It is no coincidence that the city was called "the Transcaucasian Conservatory". The music life was active there, which in its turn contributed to the increase of the musical level of the people of Shushi. Armenian composers and musicians-performers Grigor Syuni, Yeghishe Baghdasaryan, Daniel Ghazaryan, Arshak Kostanyan, Bogdan Tumanyan, Hovhannes Ioanisyan, Alexander Alexandryan, Grigor Melikyan, Bala Melikyan and others were born in Shushi and became musicians in the musical atmosphere of the city. The role of Shushi in the development of folk music is also significant. The musicians of Shushi, who are widely known in Transcaucasia, raised the art of playing folk musical instruments (tar, kamancha, zurna, etc.) to a new level, and have developed and perfected various genres of Eastern music. Many of the musicians from Shushi dedicated their multifaceted activities not only to the development of their native music, but also to the national music of different peoples.

Keywords: *Shushi, music life, Grigor Syuni, Yeghishe Baghdasaryan, Daniel Ghazaryan, Arshak Kostanyan, Bogdan Tumanyan, Hovhannes Ioanisyan, Alexander Alexandryan, Grigor Melikyan, Bala Melikyan.*